ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 46 – Ա 02 մարտի 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի« Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2018 թվականի փետրվարի 26-ի N 131-Ա որոշումը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի ապրիլի 5-ի N 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 141-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետով հաստատված N 30 և N 31 հավելվածների՝ Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջին կարգի մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 64-4.3-(33-34)) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Գործակալության առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության առաջին կարգի մասնագետներից մեկը կամ Գործակալության երկրորդ կարգի մասնագետներից մեկը:

Գործակալության առաջին կարգի մասնագետը Գործակալության առաջին կարգի մասնագետներից մեկի, Գործակալության երկրորդ կարգի մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ